

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԹԵՄԻ ՄՆԱՅՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԺՈՂՈՎ

Հայց. Եկեղեցւոյ Արեւմտեան Թեմի Մնայուն Հիմնադրամի Վարչութիւնը Առաջնորդ Սրբազան Զօր Նախագահութեամբ տարին երկու անգամ պաշտօնական ժողով կը գումարէ, ուր տեղեկագիրներ կը ներկայացուին եւ որոշումներ կ'առնուին հիմնադրամին աւելի հասոյթ ապահովելու կապակցութեամբ:

Շաբաթ, Փետրուար 12ի առաւօտեան Առաջնորդարանի մէջ Սրբազան Զօր Նախագահութեամբ գումարուեցաւ հիմնադրամին ժողովը, որու ընթացքին նկատի առնուեցաւ Ատենապետ՝ Տոբթ. Կերի Լիլլէճեանի առողջապահական լուրջ վիճակը եւ նոր Ատենապետ ընտրուեցաւ Տիար Պէն Գրիգորեան, որ Թեմէն ներս ծառայած է նաեւ որպէս Թեմական Խորհուրդի Գանձապահ: Սրբազան Հայրը եւ անդամները շնորհաւորեցին զինք եւ իրենց պատրաստակամութիւնը յայտնեցին աջակցելու իրեն: Ուրախ ենք յայտնելու նաեւ, թէ Թեմական Խորհուրդի Ատենապետ՝ Իրաւաբան Տիար Ժոզէֆ Կանիմեան եւ ճան Եալտրզեան Բ. որպէս նոր անդամներ մաս կազմեցին Հիմնադրամի Վարչութեան: